ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«26» մայիսի 2025թ. № 472

ԵՎՐՈՊԱՅԻ ՁԵՌՆԱՄԱՐՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՏՎԱՎՈՐ ՏԵՂ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՐԶԻԿ ԱՐԹՈՒՐ ԿԱՐԵՆԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 47-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 2-ի N 89-Ա որոշմամբ և հաշվի առնելով, որ մարզիկ Արթուր Կարենի Մելքոնյանը Եվրոպայի ձեռնամարտի 2025 թվականի մեծահասակների առաջնությունում զբաղեցրել է 2-րդ տեղը, հիմք ընդունելով մարզիկ Արթուր Կարենի Մելքոնյանի դիմումը, դիպլոմը և ««ՖԱՋ» ձեռնամարտի հայկական ֆեդերացիա» հասարակական կազմակերպության նախագահ Զալիկո Համբարյանի կողմից տրված տեղեկանքը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2025 թվականի բյուջեի՝ «Հանգստի և սպորտի ծառայություններ» գործառական դասակարգման «Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման 4727 հոդվածից Արթուր Կարենի Մելքոնյանին տրամադրել միանվագ դրամական պարգևատրում 420 000 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. մայիսի 26
ք.Սպիտակ